ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» թեմայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սվետլանա Մանուչարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գորիսի N 4 ավագ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Ի՞նչ է արժեքը և արժեքային համակարգը 4

2. Ազգային արժեքներ 6

3. Մ. Խորենացու «Հայոց պատմություն» երկի ուսուցման գործիքակազմ 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

Գրականության ցանկ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության հիմնաքարը ճշմարիտ բանականություն ձևավորելն է: Երեխաների կրթությանն անդրադառնալիս հաճախ ենք օգտագործում «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մեջ: Ի՞նչ է արժեքը: Ժամանակակից կյանքում մշակութային, քաղաքական, սոցիալական փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են արժեքները, աշխարհընկալումները, ինչպես նաև մարդկային հարաբերությունները: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ առաջացնում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Այսօրվա աշակերտի պահանջմունքներն ու հետաքրքրությունները անընդհատ նրան հեռացնում են ազգային ակունքներից, նրանք կարծես «սեփական ժառանգությունից փախչող» սերունդ լինեն: Բազմաթիվ բացթողումներ և մակերեսային մոտեցումներ երիտասարդ սերնդին հեռացրել և հեռացնում են նախնիների ժառանգած արժեհամակարգից, այլ կերպ ասած՝ նահանջ ազգային արժեքներից, իսկ նրանց բանականությանը հեշտությամբ պատվաստվում են համաշխարհային կործանարար պահանջները: Մենք առնչվում ենք սեփական մշակույթն ու պատմությունը չհարգող, անգամ կասկածի տակ դնող աշակերտների: Էթնոմշակութային առանձնահատկությունները պետք է ուղենշային լինեն արդի մարտահրավերների պայմաններում: Հաշվի առնելով այս և բազմաթիվ այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակութային հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Սերունդը պիտի հասնի այն գիտակցության, որ կյանքի առաջընթացից նա դուրս չի մղվի միայն գիտելիքի բարձր մակարդակով, ազգային արժեքների պահպանմամբ, մշակութային արժեքների ստեղծմամբ և հոգևոր դաստիարակությամբ: Վերոնշյալ հիմնախնդիրներով էլ պայմանավորված է հետազոտության **արդիականությունը**:

Աշխատանքի **նպատակն է** նպաստել հայ գրականության դասավանդման ընթացքում սովորողների մեջ ոչ միայն համամարդկային, այլև ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորմանն ու զարգացմանը՝ ներկայացնելով

Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» թեմայի դասավանդման օրինակելի տարբերակներ:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- **անդրադառնալ** «արժեք» հասկացության և արժեքային համակարգի էությանը,
- **պատկերացում տալ** ազգային արժեքների մասին,
- **առաջարկել** Մ. Խորենացու «Հայոց պատմության» դասավանդման համար այնպիսի գործիքակազմ, որը միտված կլինի սովորողի մեջ ազգային արժեքների ձևավորմանը:

Հետազոտության օբյեկտը հայ գրականության դասերին սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացն է:

Հետազոտության առարկան հայ գրականության դասերին սովորողների մեջ ազգային արժեքների ձևավորման գործընթացն է:

Հետազոտության համար կիրառվել են փորձի, դիտարկման, համադրության և վերլուծության **մեթոդները**:

1. Ի՞նչ է արժեքը և արժեքային համակարգը

Արժեքները տարբեր բառարաններում տարբեր կերպ են սահմանվում: «Արժեք» բառը առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է *արժանի լինել* [11, էջ 401]: Արժեքն ինչ–որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ: Հայերեն բառարանում «արժեք» բառը մեկնաբանվում է գին, գնահատանք յարգ (օգտակար կամ ընտիր հատկություն, արժանիք) [4]:

Արժեքների հիմնախնդիրը լայն նշանակությամբ առաջացել է մշակութային ավանդույթների արժեզրկման և հասարակության գաղափարական հիմքերի վարկաբեկման դարաշրջանում: Հունական ժողովրդավարության ճգնաժամը ստիպեց Սոկրատին առաջին անգամ առաջ քաշել հետևյալ հարցը. «Ի՞նչն է լավ»:

Փիլիսոփայության մեջ գոյություն ունի արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է աքսիոլոգիա (հունարեն՝ ***axios***՝ *արժեքավոր* և ***logos***՝*գիտություն*) [2, էջ 285]: Աքսիոլոգիան փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնույթի, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածի մասին: Տարբեր դարաշրջաններում արժեքները դիտարկվում էին որպես կեցության բաղադրիչ մաս, որպես սոցիալականացվող անձի համար կարևոր նորմատիվ չափանիշ, ինչը պայմանավորում է անհատի համոզմունքների և դիրքորոշումների ուղղվածությունը:

Արժեքների բնույթի մասին մեծ հետազոտություն և առանձին տեսություն է մշակել Շ. Շվարցը [6, էջ 232]: Ըստ հեղինակի՝ երբ մենք մտածում ենք մեր արժեքների մասին, մենք մտածում ենք, թե ինչն է մեզ համար կարևոր կյանքում: Մեզանից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ արժեքներ (օրինակ՝ ձեռքբերման, անվտանգության, կամեցողության)՝ կարևորության տարբեր աստիճաններով: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի, բայց բացարձակ անկարևոր՝ մեկ այլ մարդու համար: Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ աձանձնացվում են արժեքների ներքոհիշյալ վեց հիմնական հատկանիշները [նույն տեղում, էջ 233].

1. Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են այն վայելել:

2. Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են գործողությունները: Մարդիկ, որոնց համար հասարակական կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացված են հետապնդելու այդ նպատակները:

3. Արժեքները լայն և ընդգրկուն հասկացություններ են: Դրանք ավելին են, քան նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:

4. Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ: Արժեքները ուղղորդում են գործողությունների, մարդկանց, իրավիճակների գնահատումը կամ ընտրությունը: Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ, ինչը՝ վատ,

արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են՝ հենվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:

5. Արժեքները դասավորվում են՝ ըստ կարևորության: Մարդկանց արժեքները ձևավորում են արժեքի առաջնահերթությամբ դասավորված համակարգ, որը բնութագրում է նրանց որպես անհատների, նրանք կարևորում են ձեռքբերո՞ւմը, թե՞ արդարությունը, նորարարակա՞նը, թե՞ ավանդականը:

6. Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով: Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:

Արժեքային կողմնորոշումները ուղղորդում են մարդուն դեպի կյանքի իմաստի ու կարգուկանոնի փնտրտուքը՝ ստեղծելով հնարավորություն որոշելու իր համար լավն ու վատը, արդարն ու անարդարը, էականն ու ոչ էականը, իրականն ու կեղծը, թույլատրելին ու անթույլատրելին: Արժեքները օգնում են մարդուն իրականցնելու սոցիումի կողմից ընդունելի գործողություններ: Արժեքը կարգավորում է մարդու վարքը հասարակության մեջ, ապահովում սոցիալական կարգուկանոնը: Արժեքները վարքագծի մոտիվացիայի կարևոր հիմքն են և որոշում են դրա առանձնահատկությունները, ինչպես նաև որոշում են անձի ապագայի ցանկությունները՝ նպաստելով հեռանկարի ձևավորմանը, ապագա արդյունքի պատկերացմանը, ինչն էլ բարձրացնում է գործունեության արդյունավետությունը:

2. Ազգային արժեքներ

Ազգային արժեքների կարևորության վերաբերյալ ռուս հայտնի գիտնական, ուսուցիչ, փիլիսոփա և մշակութաբան Իզոլդա Կուչմանան այն միտքն է հայտնում, որ ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Ըստ նրա՝ անընդհատ փոփոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումները և նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար մոտեցումները մշակելու խնդիր է ծագում,

անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները [10, էջ 12]: Մեր ավանդույթները կարիք ունեն պահպանման. դրանք քարոզում են մարդասիրություն, հյուրընկալություն, ավանդապաշտություն, համամարդկային այլ բարձր գաղափարներ: Մեր ազգայինը թանկ ժառանգություն է, որը պարտավոր ենք պահել անբասիր և միայն նրա հենքի վրա կառուցել նորը: Պետք է խուսափել նաև ազգային արժեքները բացարձակացնելու բարդույթից, և փաստերով ապացուցել, որ միայն սեփական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ պետք է ներդնել օտար համակարգեր: Արժեքները ազգ-օրգանիզմի հենաշարժիչ համակարգն են:

Հայկական արժեհամակարգի գլխավոր հենքերը, որոնց վրա կառուցվում է մեր պետությունը, հետևյալն են՝

1. մշակույթ,
2. ազգ,
3. կրոն:

3. Մ. Խորենացու «Հայոց պատմություն» երկի ուսուցման գործիքակազմ

Թեմայի նպատակ

1. Կարողանալ աշխատել բնագրի շուրջ:
2. Ստեղծագործության միջոցով ընդգծել սեփական մշակույթն ու ընդունել մշակույթների բազմազանությունը, դրսևորել քննադատական մտածողություն:
3. Հասկանալ անհատի դերը մշակույթ-անհատ-հասարակություն համատեքստում:
4. Ձևավորել և ձևակերպել սեփական տեսակետը և կարողանալ հիմնավորել այն փաստերով:
5. Դրսևորել համակարգված, կառուցվածքային մտածողություն:
6. Կազմել գրագետ խոսք, վարել բանավեճ, զրույց:

Քայլաշար

1. Աշխատանք տեքստի շուրջ՝ կառուցվածքին և բովանդակությանը ադրադառնալու համար
2. Աշխատանք՝ տեքստի շուրջ՝ ընթերցված հատվածից արժեքներ դուրս գրելու համար
3. Խորենացու պատմության դասերը
4. Ստեղծագործության կերպարները և զարգացման դինամիկան
5. Անդրադարձ Խորենացու «Ողբին»

Քայլ 1-ին. Աշխատանք տեքստի շուրջ՝ կառուցվածքին և բովանդակությանը ադրադառնալու համար

Զարգացնող ուսուցման պահանջներից ելնելով՝ երեք գրքերից կազմակերպել առանձին հատվածների ընթերցումներ, ապա առաջադրել լրացնել m-աձև աղյուսակը (տե՛ս *Աղյուսակ 1*), ինչը ցույց կտա երկի կառուցվածքը և պատմական կարևոր դրվագները: Ուղղորդող հարցերով աշակերտները կլրացնեն աղյուսակը:

1. Ինչպե՞ս են վերնագրված գրքերը:
2. Յուրաքանչյուր գիրք քանի՞ գլխից է բաղկացած:
3. Յուրաքանչյուր գրքից ընթերցված հատվածի վերնագիրը գրել համապատասխան սյունակում:

Հայոց պատմություն		
Հայոց մեծերի ծննդաբանությունը	**Միջին պատմություն մեր նախնիների**	**Մեր հայրենիքի պատմության ավարտը**
Գիրքն ընդգրկում է հայ ժողովրդի նախասկզբնական պատմությունը՝ մինչև Տիգրան Երվանդյան:Ընդգրկում է 32 գլուխ: «Սահակի թղթի պատասխան….» «Հայկի ապստամբության մասին» «Հայկից սերված ցեղերի և զավակների մասին…..» ԺԳ-ԺԴ-ԺԵ գլուխները «Տիգրանի մասին, թե ինչպես էր ամեն բանով….»	Գիրքն սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից, Արշակունյանց թագավորության հաստատումից մինչև Տրդատ Մեծի գահակալությունը և Հայաստանում քրիստոնեության տարածումը: Ընդգրկում է 92 գլուխ:	Գիրքն ընդգրկում է Տրդատ Մեծի հաջորդների գահակալության պատմությունը՝ մինչև Արշակունյաց թագավորության ավարտը, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահը:Ընդգրկում է 68 գլուխ: «Սուրբ Ներսեսի և նրա մուծած բարեկարգությունների մասին»

Աժդահակի մասին-ԻԵ-ԻԶ-ԻԷԻԸ-ԻԹ-Լ գլուխները	«Թագավորության կազմակերպությունը, և որտեղից հիմնեց նախարարությունները.....» «Արգարի իշխանների առաքումը Սաբինոսի մոտ....», «Արգարի թուղթը փրկչին» «Երվանդակերտ կոչված ձեռակերտի մասին» «Ալանների հարձակումը մեզ վրա. . . .» «Տրդատի քաջագործությունները . . . . »	«Արշակի նորից նախանձելը Գնելին և նրան սպանելը» ԻԳ-ԻԴ-ԻԵ-ԻԷ գլուխները «Երանելի Մեսրոպի մասին» ԾԳ, ԾԴ գլուխները «Հայոց չար միաբանության մասին»

Աղյուսակ 1: Մ. Խորենացու «Հայոց պատմության» կառուցվածքի և պատմական կարևոր դրվագների m-աձև աղյուսակը

Քայլ 2-րդ. Աշխատանք տեքստի շուրջ՝ ընթերցված հատվածից արժեքներ դուրս գրելու համար

1. «Քո մեջ եղած աստվածային շնորքների անսպառ գործունեությունը և հոգու անդադար շարժումները քո մտածողության վրա՝ ես ճանաչեցի այս գեղեցիկ խնդրի միջոցով՝ մարմնիցդ առաջ հոգուդ հետ ծանոթանալով.... բանականության արդյունքը խոհականությունն է, և քո մեջ անհատնելի է սրանց ցանկությունը՝ ուրեմն գեղեցիկ մտածողությամբ վառ և բորբոք պահելով քո խոհականության կայծը՝ զարդարում ես բանականությունը, որով մնում ես պատկեր լինելու» [3, էջ 93]:

2. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք» [նույն տեղում, էջ 111]:

3. Արամը, աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատներին [նույն տեղում, էջ116]:

4. «…Ամբարտավանությունը և մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան…»:

«Նա հրեշտակի տեսք ուներ, ծննդական միտք, պայծառ էր խոսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորություններով աննման, խորհրդակցությամբ մեծ, հավատով ուղիղ, հուսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ» [նույն տեղում, էջ 312]:

5. «Եվ երբ հասավ մեր աշխարհը, տեսավ, որ Օտան սնուցել է իր Խոսրովիդուխտ քրոջը և պահպանել է գանձերն ու ամրոցը մեծ համբերությամբ.և իսկապես էլ նա համբերող էր, ժուժկալ և շատ խելացի, որովետև նա թեպետ Աստծու մասին ճշմարտությունը չգիտցավ, բայց կուռքերի ստությունը հասկացավ» [նույն տեղում, էջ 226]:

6. Խոսրովիդուխտ մի օրինավոր համեստ կույս էր և չուներ բոլորովին անդուռ բերան,ուրիշ կանանց նման» [նույն տեղում, էջ111]:

7. «Իսկ նա հրամայեց , որ ամեն մի գավառում շինեն աղքատանոցներ առանձնացած անբնակ տեղերում, որպեսզի Հունաց հիվանդանոցների նման մխիթարություն լինեն մարմնով վշտացածներին» [նույն տեղում, էջ 288]:

8. «Քավ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին, որ ես չպատեմ բեկվածին կամ հիվանդացածին, այլ գահավեժ անեմ…. Եվ ինչպե՞ս կարելի է այդ իմ ախտավոր ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է» [նույն տեղում, էջ 305]:

Գրքում բազմաթիվ են գեղարվեստական նման ընդգծումները, որոնց ազգային-մշակութաբանական բովանդակությունը և դրանց հավետ արդիական հնչեղությունը անժխտելի են: Մեր նախնիների նման գործերի և հատկանիշների տարեգրումը կայուն ուսումնառության արժեք ունի: Դրա միջոցով աշակերտը բացահայտում է իր արմատները, տեսնում իր անձը պատմականորեն ձևավորված մշակութային համատեքստում, ճանաչում սեփական ինքնությունը:

Քայլ 3-րդ. Խորենացու պատմության դասերը

ա) Ինքնակազմակերպման ու ինքնադրսևորման կարողունակության զարգացման համար կիրառել «Կարուսել» մեթոդը [9]: Նպատակը սեփական ուժերի հանդեպ վստահություն ձևավորելն է, արդյունքը՝ ինքնաճանաչումը:

Դասարանը բաժանել երկու մասի, փակցնել երկու թուղթ, մեկի գլխատողում գրել «Խորենացու ասույթները», մյուսում՝ «Խորենացու պատմության դասերը» և հանձնարարել խմբերին հերթով լրացնել, ապա փոխլրացնել (տե՛ս *Աղյուսակ 2*): Նման գործողությունների շնորհիվ աշակերտները կդրսևորեն հարգանք, ազնվություն, կգործեն կառուցողաբար և համերաշխ, կդրսևորեն ընկերակցելու ունակություն և համագործակցային, կոնֆլիկտների խաղաղ կարգավորման հմտություններ:

Խորենացու ասույթները	**Խորենացու պատմության դասերը**
Ինչ որ մարդն է ու նրա գործերը, այնպես էլ նրա պատմությունը: Քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է , այնքան էլ գրավում է: Մահկանացուների ժամանակը կարճ է ու անհայտ: Պատերազմն իմաստությամբ ավելի լավ է մղվում, քան բազմաթիվ ձեռքերի միջոցով:	Թէպետ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորությամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս և արժանի գրոց յիշատակի: Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության: Ճանաչել սեփական արժանիքները՝ զերծ մնալով ազգային սնապարծությունից:

Աղյուսակ 2: «Կարուսել» մեթոդի կիրառմամբ «Խորենացու պատմության դասերը» թեմայի ուսուցումը

բ) Ստեղծագործական, քննադատական և վերլուծական միտքը զարգացնելու համար աշակերտներին առաջարկվում է ընտրել որևէ ասույթ կամ դաս և մեկնաբանել: Կատարված աշխատանքն ամփոփվում է այն եզրահանգմամբ, որ Խորենացու աշխարհայացքը միտված է ազգային գոյաբանությանը, հայ մարդու արժեքային համակարգի ձևավորմանը ու դաստիարակությանը:

Քայլ 4-րդ. Ստեղծագորության կերպարները և զարգացման դինամիկան

ա) Դասարանը բաժանել 4-5-հոգանոց խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարել վերլուծել տրված կերպարը: Նպատակը ձևավորելն է կերպարներին քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

Առաջին խմբին հանձնարարել Հայկի կերպարը, երկրորդ խմբին՝ Արամի կերպարը, երրորդ խմբին՝ Տիգրանի կերպարը, չորրորդ խմբին՝ Տրդատի կերպարը: Առաջին խումբը մանրամասն կվերլուծի Հայկի կերպարը, ապա կհամեմատի Բելի կերպարի հետ՝ կիրառելով **Վենի դիագրամ** (տե՛ս *Աղյուսակ 3*):



Աղյուսակ 3: Հայկի և Բելի կերպարի վերլուծություն՝ **Վենի դիագրամի** օգնությամբ

Ուրեմն՝ հայոց ավանդադիր նահապետի կերպարում ուսումնառական ընդգծված որակ է ազատասիրությունը. չի կարող ազատ լինել ազգը կամ անհատը, որը չունի ազատության գիտակցությունը կամ նույնիսկ բնազդը, ինչը պիտի պահպանվի՝ անկախ քաղաքական անկումներից: Հակառակ դեպքում առաջ կգա խեղճության և ենթարկվածության ցաքուցրիվ հոգեվիճակը, որը ինքնակործանման խթանիչն է [10, էջ 52]:

Երկրորդ խումբը կամբողջացնի Արամի կերպարը՝ կարևորելով նրա՝ **պետություն-ազգ որակային միասնության խորհուրդը**: Երրորդ խումբը կվերհանի Տիգրանի կերպարի վեհությունը ոչ միայն արտաքին նկարագրով, բնավորությամբ, այլև գործողություններով: Օրինակ՝

Արտաքին նկարագիր

Այս և այսպիսի ուրիշ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել….» [3, էջ133]:

Բնավորություն

«Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր

արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը» [նույն տեղում, էջ133]:

Գործողություններ

Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ (օտարների) լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ…. Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները՝ հաջող աղեղնավորներ, կոպալները զինվեցին սրերով և երկաթե զգեստներով: Նա խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուղով ու մեղրով [նույն տեղում, էջ133]:

Իհարկե, պատմահայրը չէր խրախուսում որևէ մեկի կողմից մյուսի վրա լուծ դնելու ոչ բանական վիճակը: Հենց իր պատմության բարձր գաղափարաբանությամբ է հաստատում այդ, պարզապես նա ընդգծում է **ազգային արժանապատվության ինքնահաստատ իմաստը**, որ ցուցանի դրա կորստի ողբերգությունը:

Չորրորդ խումբը վերլուծում է Տրդատի կերպարը՝ զուգահեռելով Ագաթանգեղոսի կերտած Տրդատի կերպարին:

Կատարված աշխատանքն ամփոփում են հետևյալ բանաձևմամբ. «Վասն որոյ սիրեմ կոչել այսպես ըստ քաջութեան՝ Հայկ, Արամ, Տիգրան, քանզի ըստ իմ՝քաջաց ազգք քաջքն, իսկ միջոցքն՝որպես դեպ ումեք թուիցի կոչել» [10, էջ 51]:

Քայլ 5-րդ. Անդրադարձ Խորենացու «Ողբին»

«Ողբի» ուսուցման համար հատկացվում է երկու դասաժամ, որի ընթացքում կարելի է ստորև ներկայացվող գործողություններն իրականացնել:

ա) Պատճենել «Ողբը», կարդալ և մատիտով ընդգծումներ անել: Այս աշխատանքի նպատակն է աշակերտին սովորեցնել ճիշտ ընթերցել, տեքստը ուսումնասիրել, վերաբերմունք դրսևորել, օգնել հասկանալու և մեկնաբանելու տեքստի գաղափարական հիմնական և հարակից հարցադրումները, հիմնավորելու արդիականությունը:

բ) Վերլուծել «Ողբը»՝ նշելով այն հոգևոր սնունդը, որ ստացել է Աստվածաշնչից, Երեմիայի ողբից և ազգային նպատակասլացությամբ ու բազմաբնույթ բովանդակությամբ ներկայացնում է քրիստոնեական հայության գեղարվեստական գրականության ինքնատիպ բաժինը: Ապա ուսուցչի ուղղորդմամբ լրացնել աղյուսակը (տե՛ս *Աղյուսակ 4*):

Ողբո՛ւմ եմ քեզ, Հայո՛ց աշխարհ, ողբո՛ւմ եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ **վեհագույնդ**:

Ինչո՞ւ է ողբում Խորենացին

…. վրդովվեց խաղաղությունը արմատացավ անկարգությունը խախտվեց ուղղափառությունը հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը:

Վերացան թագավորդ ու քահանադ

Խորհրդականդ ու ուսուցանողդ

Ազգային ողբ

Երբ մտածում եմ այսպիսի բաների մասին, իմ մեջ հառաչանք և արտասուք են ծագում…

Բարոյալքված հասարակություն

Ուսուցիչ կրոնավոր

Վիճակավոր աշակերտ

Ժողովրդական զինվոր

Իշխան դատավոր

Եվ առհասարակ սերն ու ամոթը մեզնից վերացած:

Մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորները, որոնք ծանր և դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ տալիս:

Հավատը ծախվում է ունայն կյանքի համար:

Աստվածապաշտությունը մոռացված է, դժոխքի ակնկալություն:

Հոգևոր ողբ

Խղճում եմ քեզ, Հայաստանյացդ եկեղեցիդ, բեմիդ բարեզարդությունից անշքացած, քաջ հովվից ու հովվակցից զրկված: Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում:

Բայց դու ես, որ այրիությանդ մեջ առանց հոգացողի մնացիր, և մենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից:

Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք, արհավիրք հեթանոսների կողմից և կռիվներ հերձվածողների կողմից, և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր:

Անձնական ողբ

Ավա՜ղ այս զրկանքներին, ավա՜ղ այս թշվառ պատմության:

…. Նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն ու օրհնությունը:

Ո՞ւր է այն քաղցր աչքերի հնադարտությունը ուղիղների համար և ահավորությունը չարերի համար. ո՞ւր՝ այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս….

Ո՞ւր է երկայն ճանապարհը հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացնողը. կորա՜վ ժողովուրդը, ծածկվե՜ց նավահանգիստը, լքե՜ց օգնականը, լռե՜ց խրախուսիչ ձայնը:

Աղյուսակ 4: «Ողբի» վերլուծությունը

Աշակերտները եզրակացնում են.

1. Մարդն ինքն է իր խորին մեղքերի պատճառը, մարդ-բանականի ազգային ինքնաճանաչման անկումը, ժողովրդի ազգային միաբանության նվազումը, որի բացակայությունն է անկման եզրին հասցնում հայ ժողովրդին, քայքայում նրա պետականությունը, մեռցնում նրա հավատը:
2. Պատմահայրը գուցե ծայրահեղ է, բայց նրա քննադատության մեջ կա խոր ցավ, կսկիծ, մեծ, շա՛տ մեծ հայրենասիրություն:
3. Խորենացին մերժում է **ծուռվիզ անճարակությունը, օտարահաճ հոգեվիճակը, շտապ ենթարկվածությունը, օտարից փրկություն աղերսող-մուրացողի կարգավիճակը:**
4. Ի վերջո «Ողբում» ամեն ինչ ժխտելով, մերկացնելով՝ Խորենացին ենթատեքստում սերունդներին ժառանգում է ազգային ուժեղ պետականության մոդել: Այն հայ ժողովրդի միաբանության, ինքնաճանաչման գաղափարի, ինքնուրույն, անկախ պետականություն ունենալու գրական հանգանակն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խորենացու «Հայոց պատմության» դասերն ու խորհուրդները գրական, հասարակական և ազգային վստահելի դպրոց են աշակերտների համար: Գլոբալիզացման և համահարթեցման հրավերները կկարողանանք հաղթահարել՝ միայն պահելով մեր ազգային արժեքները՝ հավատը, լեզուն, մշակույթը: Պետք է դաստիարակենք ժամանակաշրջանի ճիշտ ըմբռնում՝ ազգային հիշողության հենքի վրա, որ աշակերտը կրի իր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, կարևորի ազգի հավաքական կերպարը, արթնացնի ներքին զորությունն ու անդրդվելի կամքը, որ վաղվա հոգևոր ու ֆիզիկական գիշատչային պայքարում գիտակցումով պահի իր ինքնությունը, գիտակցումով կառչի իր արմատներին:

Գրականության ցանկ

1. Բախչինյան Հ., Սարինյան Ս., Հայ գրականություն: Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք, Երևան, Արևիկ, 2009:
2. Խաչատրյան Ն. Մանուսյան Ս. Սերոբյան Ա., Գրիգորյան Ն., Հակոբջանյան Ա., Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում, Երևան, հեղ. հրատ., 2014:
3. Խորենացի Մ., Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981:

4. Կռանեան Ա., Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998, http://www.nayiri.com/search?dt=HY_HY&query=%D5%A1%D6%80%D5%AA%D5%A7%D6%84&l=hy_LB (մուտք՝ 30.10.2022):
5. «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների փորձնական չափորոշիչը և ծրագրերը, https://escs.am/files/files/2021-05-06/1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf (մուտք՝ 30.10.2022):
6. Մկրտչյան Ա., Արժեքների ուսումնասիրման տեսական և կիրառական ասպեկտները, «Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր», Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 227-237:
7. Սարգսյան Ա., Պետականակենտրոն և դավանակենտրոն արժեքային համակարգեր (V-X դդ պատմագրության հիմքի վրա), «Բանբեր Մատենադարանի», №28, Երևան, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի հրատ., 2019, էջ 133-155:
8. Սաֆարյան Վ., Հայ միջնադարյան գրականություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:
9. Ալավերդյան Ս., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, https://prezi.com/view/U6VX0HVVmsns4tiN8aHL/ (մուտք՝ 30.10.2022):
10. Кучмаева И., Культурное наследие. Современные проблемы, Москва, Наука, 1987.
11. Лавриненко В, Философия: Учебник, Москва, Юристъ, 2004.